«Կապանի ճանապարհների շահագործման և շինարարական» ՍՊԸ կողմից Սյունիքի ավազակոպճային խառնուրդի երևակման տեղամասի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ 2-րդ հանրային քննարկման

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

19.09.2023թ. **ք. Կապան**

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի /21.06.2014թ. ՀՕ-110-Ն/, ինչպես նաև ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով՝ որպես ազդակիր համայնք Սյունիքի մարզի Կապան համայնքի Սյունիք բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում 2023 թվականի սեպտեմբերի 13-ին, ժամը 14:00-ին տեղի ունեցավ «Կապանի ճանապարհների շահագործման և շինարարական» ՍՊԸ կողմից Սյունիքի ավազակոպճային խառնուրդի երևակման տեղամասի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ 2-րդ հանրային քննարկումը:

Քննարկմանը ներկա էին «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝ Հովիկ Մեսրոպյանը, «Կապանի ՃՇՇ» ՍՊԸ տնօրեն՝ Արարատ Կարապետյանը, Կապանի համայնքապետարանի աշխատակիցներ, ինչպես նաև այլ քաղաքացիներ:

Հանրային քննարկման մասնակիցների անհատական կազմը կցվում է սույն արձանագրությանը:

Հանրային քննարկումը վարեց Կապան համայնքի ղեկավարի 1-ին տեղակալ՝ Գոռ Թադևոսյանը: Նա ողջունեց ներկաներին, ներկայացրեց օրակարգը: Որպես ծանոթություն հիշեցրեց, որ հանրային քննարկման վերաբերյալ կարելի էր ծանոթանալ «Առավոտ» օրաթերթի 2023 թվականի սեպտեմբերի 2-ի թիվ 151 (6923) համարում, ինչպես նաև ՀՀ շրջակա միջավայրի նախարարության և Կապանի համայնքապետարանի պաշտոնական կայքերի հայտարարությունների բաժնում (www.env.am, www.kapan.am): Հանրային քննարկման վերաբերյալ դիտողություններ կամ առաջարկություններ չեն ստացվել:

Զեկույցի համար խոսքը փոխանցվեց ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի փորձագետ՝ Հովիկ Մեսրոպյանին:

Զեկույց (Հովիկ Մեսրոպյան) – Ինչպես պարոն Թադևոսյանը նշեց, «Շրջակա միջավայրի նախարարության փորձաքննական կենտրոն» հայտ է ներկայացվել «Կապանի ճանապարհների շահագործման և շինարարական» ՍՊԸ Սյունիքի մարզի Սյունիքի ավազակոպճային խառնուրդի երևակման տեղամասի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը: Մինչ հայտին անդրադառնալս ուզում եմ տեղեկացնեմ, որ օրենքով սահմանված կարգով տպագրվել է «Առավոտ» օրաթերթում, բացի «Առավոտ» օրաթերթից ծանուցվել է Կապան համայնքին և տեղադրվել է Շրջակա միջավայրի նախարարության պաշտոնական կայքում: Մինչ այս պահը նախնական գնահատման հայտը գտնվում է փորձաքննության փուլում, ի դեպ ուզում եմ Ձեզ ներկայացնել, որ սա ընդամենը երկրաբանական ուսումնասիրություն է: Ընթացակարգը հետևյալն է, եթե դրական արդյունքի դեպքում ընկերությանը տրվի դրական փորձաքննական եզրակացություն, ապա ընկերությունը տվյալ տարածքում պետք է իրականացնի երկրաբանական ուսումնասիրություն՝ նոր նախնական գնահատման հայտով, թեպետ այդ ժամանակ էլ նախնական գնահատման հայտ չի լինի: Լինելու է հաշվետվություն, ըստ մեր նոր օրենքի համաձայն և կիրականացվի երկու հանրային քննարկում: Մինչ այս պահը չորս է, սակայն հոկտեմբերից երկու հանրային քննարկում:

Հարց (Գոռ Թադևոսյան) – Նախքան օգտակար հանածոյի արդյունահանումը գործունեության վերաբերյալ երկու հանրային քննարկո՞ւմ:

Պատասխան (Հովիկ Մեսրոպյան) – Այո, նախկինում չորս հանրային քննարկման փոխարեն, եթե երկրաբանական ուսումնասիրությունն էլ գումարենք կդառնար վեց հանրային քննարկում: Ասեմ, որ սա դրական արդյունքի դեպքում: Միգուցե երկրաբանական ուսումնասիրության ժամանակ պաշար չի հաստատվում նոր դրանից հետո ԳԿՀ-ի նիստով հաստատվում է և ներկայացվում փորձաքննության: Այսքանը երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների վերաբերյալ:

Ինչպես նշեցի, մինչ այս պահը գտնվում է փորձաքննության փուլում: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության բոլոր ստորաբաժանումները՝ անտառային կոմիտեն, անտառային քաղաքականության վարչությունը, մթնոլորտային օդի, հիդրոօթերևութաբանական կայանի վտանգավոր նյութեր և թափոնների վարչությունները, ջրային ռեսուրսները, ջրային քաղաքականության վարչությունները և այլն: Բացի շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից փորձաքննությանը մասնակցել են նաև առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, ներքին գործերի և պաշտպանության նախարարությունները:

Ստացված բոլոր առաջարկություններն ու դիտողությունները ներկայացվել են ընկերությանը: Ընկերությունը նախնական գնահատման հայտը լրամշակել և ներկայացրել է փորձաքննության: Ես քիչ հետո կանդրադառնամ այդ փորձաքննական կարծիքներից մեկին:

Ըստ նախնական գնահատման հայտի ուզում եմ 2 նախադասությամբ ներկայացնեմ նաև բնապահպանական մասը: Նախ ներողություն Ձեր նախագծողը պետք է ներկա լիներ: Ըստ ներկայացված հաշվետվության, տվյալ տարածքում, պարոն Թադևոսյան, հարգելի հանրային քննարկման մասնակիցներ, Կարմիր գրքում գրանցված բույսեր և կենդանիներ չկան՝ ըստ նախնական գնահատման հայտի: Բնության հուշարձանների և հատուկ պահպանվող տարածքների հետ համընկնում չկան: Ինչպես գիտեք, ցանկացած գործունեություն իրականացնելիս շրջակա միջավայրի վրա որոշակի բացասական ազդեցություն է ունենալու, բայց նախնական գնահատման հայտում ներկայացվելու է այն բնապահպանական միջոցառումները, որոնք պետք է իրականացվեն՝ մեղմացնելու նպատակով: Ասենք մեքենաների լիցքավորումը պետք է իրականացվի տարածքից դուրս, իհարկե այդտեղ նշված է, որ Կապանի ՃՇՇ-ն՝ իր անմիջապես լիցքավորման կետում: Ջրցանի օգտագործումը նշված չէ, որովհետև այդտեղ խոնավ տարածք է, ճանապարհների առումով կարելի է ջրցան օգտագործել և այլն: Բացի բնապահպանական միջոցառումներից իրականացվելու է նաև մշտադիտարկումներ՝ հողի, ջրի, մթնոլորտային օդի և գորշ կետի մշտադիտարկումներ: Մշտադիտարկումների համար ընկերությունը նախատեսել է 763 000 դրամ տարեկան: Այս բոլոր աշխատանքներն իրականացնելուց, երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներն ավարտելուց հետո, կապ չունի, թե դրանից հետո թույլտվություն կստանաք, թե չեք ստանա: Կան ընկերություններ, որ ասում են մենք թույլտվություն ստացել ենք չենք իրականացնելու ռեկուլտիվացիայի աշխատանքներ: Նման բան գոյություն չունի: Ցանկացած գործունեություն իրականացնելուց հետո իրականացվելու է ռեկուլտիվացիայի աշխատանքներ, որը շատ խիստ դրված է հատկապես 2021թ.-ի օգոստոսի 18-ի կառավարության որոշման համաձայն: Ըստ այդ որոշման, օրինակ Ձեր հայտում ներկայացվել է 175 000 դրամ ռեկուլտիվացիայի աշխատանքեր, որից 54 000 դրամը լեռնային աշխատանքների իրականացման համար է, մնացածը կենսաբանական ռեկուլտիվացիայի: 175000 դրամը բաժանվում է Ձեր աշխատած ամիսների ընթացքում: Հենց առաջին իսկ օրվանից դուք տվյալ գումարը վճարում եք պետբյուջե, որպեսզի ավարտելուց հետո, եթե չիրականացնեք՝ այդ գումարը կա բյուջեով, այդ գումարով կիրականացվի ռեկուլտիվացիայի աշխատանքներ: Այսքանը մեր նախնական գնահատման հայտից: Ես ներկայացրեցի ստացված կարծիքներ: Պարոն Թադևոսյան մենք ունենք կարծիք, որ

ներկայացվել է և որը քննարկման առարկա է մեր մոտ՝ փորձաքննության փուլում: Դա նորից կքննարկվի, թեպետ համարյա քննարկելու ... և հապատասխան որոշում կկայացվի:

Հարց (Գոռ Թադևոսյան) – Ո՞ր հարցի վերաբերյալ:

Պատասխան (Հովիկ Մեսրոպյան) – Կապված գետի հունի հետ:

Հարց (Գոռ Թադևոսյան) – Կա՞ն հարցեր:

Լրացում (Հովիկ Մեսրոպյան) – Ի դեպ ասեմ, որ ընդամենը 12 հորատանցք է իրականացվելու: Յուրաքանչյուրը չորս մետր խորությամբ, ընդհանուր 73 գծամետր: Հետագայում այդ վերցրած նմուշները ուղարկվելու է լաբորատորիա փորձաքննության՝ ուսումնասիրության փուլում, որպեսզի պարզվի տվյալ տարածքում օգտակար հանածո կա, թե չկա: Այսքանը մեր նախնական գնահատման հայտի վերաբերյալ Ձեզ տեղեկատվություն:

Հարց (Արշալույս Խաչատրյան) - Որ ասեցիք 2021-2022թթ արդյո՞ք դա հայկական տարածք է, թե ադրբեջանի:

Հարց (Հովիկ Մեսրոպյան)- Այսի՞նքն:

Պատասխան (Արշալույս Խաչատրյան) –Այսօր մենք, որ դուրս ենք գալիս այդ հանքից, թույլատրվում է դուրս գալ կամ դուրս չգալ, մենք այսօր...

Պատասխան (Արարատ Կարապետյան) – Դա մեր տարածքի մասին է խոսքը:

Լրացում (Արշալույս Խաչատրյան) - Կներեք պարոն Կարապետյան: Մենք, որ այդ հանքից դուրս ենք գալիս մեր տարածքը չի:

Պատասխան (Գոռ Թադևոսյան) – Տարածքը գտնվում է Հայաստանի Հանրապետության սահմանների ներսում: Եվ դեռ չի շահագործվում: Ինչի՞ մասին է խոսքը:

Լրացում (Հովիկ Մեսրոպյան) – Ժողովուրդ ես քիչ առաջ բացատրեցի, որ հիմա ընկերությունն իրականացնում է ուսումնասիրության աշխատանքներ: Ուսումնասիրության աշխատանքների նպատակը որն է, որպեսզի պարզի տվյալ տարածքում օգտակար հանածո կա, թե չկա: Միգուցե լինեն, բայց շատ քիչ լինեն: Մեր ժողովրդի լեզվով ասած իր օգուտն ու վնասը չփակեն: Այսպես ասեմ, որ հասկանալի լինի: Դա դեռ առջևում է: Իհարկե, թույլտվություն ստանալուց հետո: Միգուցե թույլտվություն չի ստանում: Իսկ ինչ վերաբերվում է հայկական կամ թուրքական, ապա ժողովուրդ մի քիչ լավատես լինենք: Գետի հունից 35մ հեռավորության վրա ընդամենը հորատանցքեր են բացվելու 93-112մմ տրամաչափով, 4մ խորությամբ փորում են, իջնում նայում են ավազ կա, թե չկա: Այդ վերցրած նմուշները ընդամենը շատ քիչ քանակությամբ, ի դեպ ասեմ նախկինում մինչև 150մ^3 թույլտվություն կար, որ կամ 200 կամ 250մ կախված տարածքի չափից, իսկ ընկերության տարածքը 1.32 հա է, թույլ էին տալիս մինչև 200-250 մ^3 ծավալով ավազ հանեին՝ ուսումնասիրության նպատակով:

Բայց արդեն երկու տարի է ընդերքի մասին օրենքով արգելվում է: Ավազի դեպքում շատ քիչ քանակությամբ, այնքան, որ ուղարկվի նմուշարկման:

Խոսք (Գոռ Թադևոսյան) – Ուսումնասիրության փուլն ավարտելուց հետո, երբ ընկերությունը սկսի օգտակար հանածոյի արդյունահանումը, օրենքով սահմանված կարգով սոցիալ-տնտեսական պարտավորություն կստանձնի համայնքի հանդեպ: Այդ ժամանակ համայնքը կներկայացնի և կպայմանավորվի արդյունահանողի հետ՝ պարտավորությունների չափի, ժամկետների վերաբերյալ, որը կամրագրվի պայմանագրով: Այնպես որ սպասենք արդյունքներին և մենք դեռ հանրային լսումներ կունենանք արդյունահանման վերաբերյալ: Եթե այլ հարցեր չկան, ապա այսօրվա հանրային քննարկումն համարենք ավարտված:

Լրացում (Հովիկ Մեսրոպյան) – Ես մեկ բան ավելացնեմ, որ սոցիալական օգնությունների համար այժմ կառավարության նախագիծ կա, մոտ օրերս կարծում եմ կհստակեցվի, թե արդյունահանողները ինչ տոկոսով պետք է համայնքին ցուցաբերեն սոցիալական օգնություն: Շնորհակալություն մասնակցության համար: Ես նորից ասում եմ, որ մեր փորձաքննությունը քննարկելու հարց ունի, մենք մեկ կարծիք ունենք՝ բացասական կարծիք: Նշեմ, որ վերջնական արդյունքը կներկայացվի ընկերությանը:

<u>Հանրային քննարկման պատասխանատու՝</u>

Կապան համայնքի ղեկավար **Գևորգ Փարսյան**

<u>Ձեռնարկող՝</u>

«Կապանի ՃՇՇ» ՍՊԸ տնօրեն **Արարատ Կարապետյան**

<u>Հանրային քննարկման վարող՝</u>

Կապան համայնքի ղեկավարի 1-ին տեղակալ **Գոռ Թադևոսյան**

<u>Հանրային քննարկման արձանագրող՝</u>

Կապանի համայնքապետարանի

գյուղ. և բնապահ. բաժնի առաջատար մասնագետ **Աստղիկ Մկրտչյան**